Հուսիկ Արա

Ծիածանի 8-րդ գույնը

Քո անունը ես գրում եմ իմ քաղաքի պատերին՝
ծիածանի 8-րդ գույնով չտեսնված.
ես սիրում եմ հատ-հատ բոլոր տառերը քո անվան,
և այբուբենը ունի հենց այդքան տառ:

Քո հետքերը փայփայում եմ մայթերին,
և շնչում, մերկապարում է ամեն սալիկ,
ջերմությունդ նկարում եմ տերևներին
ու կեղևին ծառերի,
շարժումներդ սիզամարգին շոշափում՝
ճյուղից հենց նոր պոկված նշենու ծաղիկ,
որ տիեզերքում ժամանակը կանգ չառնի,
և կանգ չառնի սիրտդ իմ կրծքի տակ:

Քաղաքը լիքն է քեզնով՝
ամբողջովին ու հավասար.
նայում է քո՛ հայացքով,
խոսում է քո՛ բառերով,
և քո՛ թևերով է գրկում:

Երկիրը տեղավորվել է չափերի մեջ
քո քաղաքի,
և գնալու այլ տեղ չունեմ.

ես ավարտվում եմ այնտեղ,
որտեղ սկսվում ես դու: